վէզիրին և տէֆտէրտարին, որպէս և ամենայն ազգ տային. և ի Դ ամսոյ Եշի (Հոկտ.) մտաք առ վէզիրն և չհաւանէր ընծային։ Եւ բերեալ էր զպարոնն ծեր Ուլահին ընդ իւր, որ յոյժ հաւատարիմ գտաւ իւրեանց, զոր նախ ինքն եդ անդ և արդ պահանջէր ևս Բ՚ քսակս, և նա ոչ առնոյր յանձն թէ Ոչ եմ կարող և ոչ է պիտոյ իշխանութիւնդ. և եդ ի բանտս մահապարտաց մինչև էառ, և զորդին եդ պարոն յՈւլահ և զնա արձակեաց։

Եկն և յաւուրս յայսոսիկ տօնանմայ Սեաւ Ծովին, որ գնացեալ էին ի Մարտի ամսոյ ի վերայ Ազախու, չինեալ անդէն բերդակս ինչ փոքր, և դարձեալ անտի անփորձ, որ էր նաւս Լ։ Եւ յեղրս ծովու, ուր որ հանդիպին՝ ի չէնս, ի գիւղս և յաւանս և յամենայն զաւառս, և ելանեն ի Պալըխլաւայ կոչեցեալ տեղոյն չէնս վանից քրիստոնէից Ցունաց, որ ունին անդ եկեղեցի յանուն Սրբոյն Գէորգեայ բազում միաբանօք, և զօրք նաւուցն եէնկիչարեաց մտեալ ի վանսն և կալեալ զառաջնորդ ուխտին սպանանեն և զկահս եկեղեցոյն և զսպասս աւար հարկանեն և առնեն թալան աւերմամբ հանդերձ, նա՛ և զկուսանս յոքունս ապականեն և բազում ոճիրս գործեն, որպէս և յամենայն պատահեալ տեղիսն, յորոց յերկիւղէ բազումք ելեալ ի լերինս փախստեայք և մոլորական և ի ծերպս վիմաց, այլք և ի հեռիս թաքստեայք չրջէին՝ մինչև ելին նոքա անտի ամենայն նաւուք և հեռանան ի մէջ ծովու մեղմագոյն հողմով գնացիւք։ Յայնժամ վրէժխնդիրն Աստուած առնէր իսկոյն զվրէժ անմեղաց սրբոցն և քակման եկեղեցոյն Գէորգեայ սրբոյն, զի թնդիւն եղեալ յանկարծակի ի ծով և եռացեալ ջուրն իբրև ի վերայ կաթսայի բորբոքելոյ և անդէն առ յիրեարս բերեալ զնաւսն ուժգին բախմամբ, և մէկմէ-